ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Սուրբ Հարության ավետիսով, ուրախ ենք ձեզ ողջունելու և հարուցյալ Փրկչի Իշման սուրբ սեղանից հղելու երկնառաք օրհնություն տիրախնամ Աթոռիդ եկեղեցիներին, բարեջան հոգևոր սպասավորներին և համայն Մեր հավատացյալ զավակներին, Մեր սրտից բխած ամենաջերմ մաղթանքներով հանդերձ:

Սուրբ Հարության շնորհները թող առատապես բաշխվեն համայն մեր հավատացյալ ժողովրդին ի շինություն հոգևոր կյանքի, համրապնդումն մեր Մայր եկեղեցու միության և ի կենսագործումն ձեր կրոնական, մշակութային և բարեսիրական աստվածահաճո իղձերի:

Հարուցյալ Տիրոջ շնորհներով թող լուսավորվեն մանավանդ աշխարհը համայն ու ժողովուրդները բոլոր, գտնելու համար իրավ ճանապարհը խաղաղ ու արդար գոյակցության և համերաշխ գործակցության:

«Խաղաղութիւն ընդ եղբարս. և շնորհք ընդ ամենեսին ոյք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անկեղծութեամբ» (Եփես. Զ 23—24), ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով լեցուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: